

14934

ԱԴՐ Կ(Բ)Կ ԿԵՆՏՎՈՄԻՆ ԿԻՑ ԿՈՒՍԱԿՅՈՒԹ-ՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԻՆՍՏԻՏՈՒՑ

ՅԵՎԳ. ՏՈԿԱՐԺԵՎՈՎԻ  
ՄԱՄԵԴ ԿԱԶԻՅԵՎ

ԽՄՀՄ ՃՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ՍՏԱԼԻՆՅԱՆ  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱԶԵՐՆԵՃԻ

Քաղաքական գրականության բաժին  
ԲԱԳՈՒ-1940 թ.

12  
5-81

26 SEP 2006

ԱՐԴ (Ք)Կ ԿԵՆՏԱԿՈՒՄԻՆ ԿԻՑ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՍԱ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԽԱՏՏՈՒՏԻ

1 DEC 2009

32

8-81

ՅԵՎ.Գ. ՏՈԿՈՐԺԵՎ.ՍԿԻ ՅԵՎ. ՄԱՄԵԴ ԿԱԶԻՅԵՎ.

ԱՅ

ԽՍՀՄ ՃՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ՍՏԱԼԻՆՑԱՆ  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

8-81

Ա.ԶԵՐՆԵՇՐ  
Քաղաքական գրականության բաժին  
Բագր. — 1940 թ.

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՏԱԼԻՆՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեր մեծ հայրենիքը — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը — ամբողջ աշխարհում ամենաբազմազգ պետություններից մեկն է: Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները յեղբայրական տմուր կապերով միացած են միասնական հզոր սոցիալիստական ընտանիքի մեջ: Աշխարհում վոչ մի աեղ չկա և կտպիտավական պայմաններում չի կարող լինել այնպիսի ինտերնացիոնալ համախմբվածություն, ժողովուրդների այնպիսի անկեղծ բարեկամություն, բոլոր ազգությունների յեղբայրական այնպիսի միություն, վորպիսիք գոյություն ունեն մեզ մոտ, հաղթանակած սոցիալիզմի յերկրում: Մեր յերկրի աշխատավորներն իրավացիորեն պարծենում են Խորհրդային Միության ժողովուրդների այդ մեծ բարեկամությամբ, վորովհետեւ դրա մեջ, այդ հրաշալի բարեկամության մեջ և մեր յերկրի ուժը, սոցիալիզմի բոլոր թշնամիների վրա լիակատար հաղթանակի նկատմամբ մեր ժողովրդի հավատը:

Խորհրդային Միության ժողովուրդների մեծ բարեկամությունը լինինյան — ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակն և, քաղաքականություն, վորն անշեղորեն կիրառում ե բոլշևիկների կուսակցությունը:

Նշելով մեր յերկրի ժողովուրդների այդ բարեկամության հսկայական նշանակությունը՝ ընկեր Ստալինը, կուսակցության և կառավարության ղեկավարների հետ Տաջիկստանի ու Թուրքմենստանի առաջավոր կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների խորհրդակցությունում ասել եւ —

„1917 թվականի հոկտեմբերին, յերբ մեզ մոտ ծավալվեց պրոլետարական մեծ հեղափոխությունը, յերբ մենք տապալեցինք ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին, մեծ լենինը, մեր ուսուցիչը, մեր հայրն ու դաստիարակիչը, ասել ե, վոր այսուհետեւ չպետք ե լինեն վոչ տիրապետող, վոչ հպատակ ժողովուրդներ, վոր ժողովուրդները պետք ե հավասար ու ազտալինեն: Դրանով նա դադաղի մեջ թաղեց հին, ցարական, բուրժուական քաղաքականությունը և ազգարարեց նոր, բոլշևիկյան քաղաքականություն — մեր յերկրի ժողովուրդների միջև բարեկա-

բարգ մտնությունը  
Խմբագրեց՝ Ա. ԲԱԲԻՉՈՒՄՅԱՆ  
Քարդ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Մըրտք. Մ. ԳԵՂՋՐԳՅԱՆ  
Տեխ. խմբ. Ա. ԱՇԻՔՈՎ

Հանձնված ե արտադրության 21/X-39 թվի: Ստորագրված ե ապագրության 22/II-40.  
Տպագր. թերթ. 1/2, թղթի փորմանը 62×94<sup>1/16</sup> Տպագր. նշան. քանակը մի թերթում  
63.408. Գլամիլի լիազոր № 1523 Ազերներ № 505/96; Պատկեր № 994, Տիրաժ 2000:

Ազերների տպարտուն, 26-ի անվ. գրքերի պալատ, Բագու, Ալի Բայրամովի փողոց:



1545  
40

մության քաղաքականությունը, յեղբայրության քաղաքականությունը<sup>4</sup>: \*

Այժմ բոլորին հայտնի յէ, վոր ժողովուրդների այդ բարեկամությունն առաջացել ու ամրացել ե միայն լենինյան - ստալինյան ազգային քաղաքականությունն անշեղորեն, ամեն որ կենսագործելու շնորհիվ: Իսկ այդպիսի ազգային քաղաքականությունը կենսագործել կարելի յէր միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ, վորը մարդկության պատմության մեջ նոր, մինչ այդ չտեսնված դարաշրջան բաց արեց:

Մեղ քիչ հեղափոխություններ չեն հայտնի մինչև 1917 թվականի հոկտեմբերը տարբեր յերկրներում: Սակայն այդ հեղափոխություններից վոչ մեկը չկարողացավ լուծել ազգային հարցը և սահմանել ժողովուրդների լիակատար իրավահավասարություն ու բարեկամություն: Բոլոր այդ հեղափոխությունները, ներառյալ և 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունն Ռուսաստանում, մի կառավարությունը փոխել են մյուսով, իսկ մարդու կողմից մարդու շահագործման սիստեմը պահպանվել ե և ամբողջ իշխանությունը մնացել շահագործողների ձեռքում: Իսկ այնտեղ, ուր գոյություն ունի մարդու կողմից մարդու շահագործում, ուր մի մարդ ապրում և մյուսի հաշվին, ուր մի վոչ մեծ խումբ մարդիկ ապրում են շքեղության մեջ, վոչինչ չանելով, իսկ հարյուրավոր ու միլիոնավոր մարդիկ, որ ու գիշեր աշխատելով ապրում են կիսաքաղց, այնտեղ չի կարող հավասարություն լինել մարդկանց միջև, առավել ևս տարբեր ազգությունների պատկանող մարդկանց միջև: Պորտաբույծ - անբանների մի խումբ միմիայն բռնությամբ ու խարեյությամբ կարողացավ բոլոր ժամանակների ընթացքում շահագործել միլիոնավոր մարդկանց: Սակայն շահագործողների համար հեշտ չե միմիայն բռնությամբ կանգուն մնալ, առավել ևս, վորդա չնչին փոքրամասնության բռնությունն ե հսկայական մեծամասնության վրա: Այդ պատճառով շահագործողները միշտ աշխատում են այդ բռնությունը քողարկել խաբեյությամբ: Կապիտալիստների ու կալվածատերների համար աշխատավոր մասսաներին խաբելու ամենահարմար ձեւներից ու միջոցներից մեկն ե ծառայում ազգային թշնամության տարածումն ու տարբեր ժողովուրդների միջև անհավասարության սահմանումը:

Այսպես, ցարական կառավարությունն Ռուսաստանում՝ ձգտելով հետ քաշել աշխատավորներին իրենց ազատագրության համար մղվող պայքարից, ձգտելով խանգարել հեղափոխական ուժերի միացմանը,

\* ՍՏԱԼԻՆ: Կուսակցության և կառավարության ղեկավարների հետ 8աջիկստանի ու Թուրքմենստանի առաջավոր կոլտնաենականների ու կորանաենակենների խորհրդակցությունում արտասանած ճառը: Ժող. Լենին և Ստալին, հրատ. 2-րդ, հ. III էջ 660:

ուժգնորեն ազգային թշնամանք եր մացնում, կովկասի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի ժողովուրդների միջև կոառարածն պրովոկացիա յեր սարքում, հրեաների արյունահեղ ջարդեր կազմակերպում և այլն:

Ցարական կառավարությունը ծայրամասերի ազգություններին պրկում եր քաղաքական և առասարակ ամեն մի իրավունքից: 1907 թվականի հունվարի 3-ի ցարական որենքն ուղղակի ասում եր.

„Խուսաստանի պետության ամրացման համար սաեղծված Պետական Խուման վորով ուստական պլիտի լինի: Այլ ժողովուրդները, վորոնք մանում են մեր տերության կազմի մեջ, պետք և ունենան իրենց կարիքների ներկայացուցիչները, բայց չպետք ե և չեն լինի այն թվի մեջ, վորը նրանց հարավորություն ե տալիս դուստ ուստական հարցերի վճռողները լինել: Իսկ պետության այն ծայրամասերում, ուր բնակչությունը գեղ չի հասելքաղաքացիականության բավականաչափ գարգացման, Պետական Դումայի համար ընտրությունները պլիտի ժամանակավորապես դադարեցվեն“:

Այդ որենքի հիման վրա ընտրական իրավունքներից զրկված են յեղել Միջին Ասիայի, Կովկասի, Կազախստանի, Յակուտիայի և նախկին ցարական Ռուսաստանի մյուս զարգությունների ըազմաթիվ ժողովուրդները:

Ցարիզմի ազգային քաղաքականությունն ամրողջովին համապատասխանում եր բուրժուազիայի ու կալվածատերների շահերին: Ծանր կարիքն ու տանջանքները, ծեծկվածությունն ու տգիտությունը նախկին ցարական Ռուսաստանում, այդ, ինչպես ասել ե Լենինը, „ժողովուրդների բանտում“ բնակվող ալբրեթանցիների, հայերի, վրացիների, կաղախների և այլ ազգությունների բաժինն եր:

Ցարիզմը, բուրժուազիան և կալվածատերներն արհեստականորեն ազգային թշնամություն եյին ստեղծում, ազգերը զրգուում եյին իրարգեմ, վորովհետև դա հարկավոր եր նրա համար, վորպեսզի հարստանարված և շահագործվող մասսաների ուշագրությունը հետ քաշեն նրանց իոկական թշնամիներից, ճնշողների դեմ պայքար մղելուց: Աշխատավոր մասսաներին արդար զարգանաբար հարստահարելու մեջ ցարական կառավարության ուղղակի ոգնություն եյին ցույց տալիս ազգային բուրժուազիան և կալվածատերները - բեկերը, խաները, բայերը, վորոնք աշխատավոր մասսաներին կողովածելու զործում ցարիզմի հավատարիմ դաշնակիցներն եյին հանդիսանում:

Իր գաղանային քաղաքականությունը կիրառելով, „ցարիզմը դիտավորյալ կերպով ծայրամասերում նահապետական - ֆեոդալական ձնշում եր մշակում նրա համար, վորպեսզի մասսաներին սարկության և տգիտության մեջ պահի: Ցարիզմը ծայրամասերի լավագույն անկյունները դիտավորյալ կերպով կոլոնիզատորական տարրերով եր բնակեցնում նրա համար, վորպեսզի տեղացիներին քշի վատթա-

շագույն շրջանները և ուժեղացնի ազգային յերկառակությունը ֆարիզմը ճնշում, իսկ յերեմն ել պարզապես վերացնում եր տեղական դպրոցը, թատրոնը, լուսավորական հիմնարկները նրա համար, վորապեսդի մասսաներին խափարի մեջ պահի: Ցարիզմը խափանում եր տեղական բնակչության լավագույն մարդկանց ամեն մի ձեռներեցությունը: Վերջապես, ցարիզմն սպանում եր ծայրամասերի ժողովրդական մասսաների ամեն մի ակտիվությունը<sup>4)</sup>: (Ստալին) \*):

Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունը մեր յերկրի ժողովուրդներին ընդմիշտ ազատեց ազգային և առնասարակ ամեն մեջնումից:

Իր գոյության հենց առաջին որերից Խորհրդային իշխանություններց անշեղորեն կենսագործել լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, վորը հասցրեց այն բանին, վոր հետամսաց, ճնշված, ազքատ և ազգայնորեն բաժան-բաժան յերկրի տեղ աճեց ժողովուրդների այն հրաշալի ընտանիքը, վոր կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Տնտեսական տեսակետից ազգային հանրապետությունների հետամացությունը, վոր ցարիզմի գաղութային քաղաքականության արդյունք եր հանդիսանում, առաջ բերեց Խորհրդային կառավարության հատուկ ուշադրությունը և մեծ ոգնություն ցույց տալու անհրաժեշտություն: „Հոկտեմբերյան հեղափոխությամբ ձռնք բերված ազգային իրավահակասարությունը, — ասել ե ընկ. Ստալինը 1923 թ., — ժողովուրդների մեծ նվաճումն է հանդիսանում, բայց այն ինքնստիճային չի լուծում ամբողջ ազգային հարցը: Մի շարք հանրապետություններ ու ժողովուրդներ, վորոնք չեն անցել կամ գրեթե չեն անցել կապիտալիզմի բովով, վորոնք չունեն կամ գրեթե չունեն իրենց պրոլետարիատը, վորոնք այդ պատճառով ել հետ են ան անցել տնտեսական և կուլտուրական տեսակետից, առանց դրսից իրական և տեսական ոգնություն ստանալու ի վիճակի չեն լիովին ոգտագործելու այն իրավունքներն ու հնարավորությունները, վոր նրանց ընձեռում և ազգային իրավահակասարությունը, ի վիճակի չեն բարձրանալու զարգացման ավելի բարձր աստիճանը և այսպիսով հասնելու առաջ անցած ազգություններին: Փաստական այդ անհավասարության պատճառները թագնված են վոչ միայն այս ժողովուրդների պատմության մեջ, այլև ցարիզմի և ոռուսական բուրժուազիայի քաղաքականության մեջ, վորոնք ձգտել են ծայրամասերը դարձնել արդյունաբերապես զարգացած կենտրոնական շրջանների կողմից շահագործվող բացառապես հումքացին շրջաններ: Անհնարին ե կարճ ժամանակամիջոցում հաղթահարել այդ անհավասարությունը, մի-յերկու տարում մեկիրացիայի յենթարկել այս ժառանգությունը... Բայց անպատճառ հարկավոր և հաղթահարել այն: Յեկ այն կարելի յէ հաղթահա-

\*): ՍՏԱԼԻՆ: Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Եջ 61:

ըել միայն ոռու պլուտարքատի կողմից իրական ու տեսական ոգնություն ցույց տալով Միության հետամսաց ժողովուրդներին՝ նրանց տնտեսական ու կուլտուրական առաջադիմության գործում: Սուանց այդ բանի հիմք չկա հույս դնելու միասնական միութենական պետության շրջանակներում ժողովուրդների ձիշտ ու հաստատուն համագործակությունը կարգավորելու վրա: Ուստի և ազգությունների փաստական անհավասարությունը լիկվիդացիայի յենթարկելու պայքարը, հետամսաց ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական մակարդակը բարձրացնելու պայքարը մեր կուսակցության հերթական յերկրորդ ինդիրն ե<sup>4)</sup>: \*)

Յելնելով դրանից, քաղաքացիական պատերազմի վերջանալուց հետո, յերբ հնարավոր յեղավագնարկելու տնտեսական շինարարության, բոլշևիկների կուսակցության XII համագումարում 1923 թվականի ապրիլին ընկ. Ստալինի գեկուցման առթիվ վորոշում ընդունվեց - ամեն կերպ ողնել մեր յերկրի ազատագրված ժողովուրդներին՝ կառուցելու սոցիալիստական անտեսություն և ձեռվ ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա:

Ծնկ. Ստալինն այդ պատմական գեկուցման մեջ նշեց այդ ոգնությունը ցույց տալու ուղիներն ու միջոցները: Այդ ցուցումները կայանում եյին սոցիալիստական արդյունաբերություն ստեղծելու, գյուղական տնտեսությունը բարձրացնելու, տեղական մարդկանցից խորհրդային կաղըեր պատրաստելու մեջև, վերջապես, ձեռվ ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան զարգացնելու մեջ. ակումբներ, թատրոններ, զպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն:

Կենսագործելով ժողովուրդների մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ցուցումները, կուսակցությունը մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում հակայական աշխատանք ծավալեց ազգային հանրապետությունների փաստական, այսինքն տնտեսական և կուլտուրական հետամսացության վերացման ուղղությամբ:

Մեր յերկրի ժողովուրդներին վոգենչելով այդ ինդրի հաջող կատարման համար, ընկ. Ստալինը և Մոլոտովը 1923 թ. սեպտեմբերի 5-ին Ադրբեյջանի աշխատավորներին ուղարկած հեռագրում գրել են.

„Ոկկ կկ հավատում ե, վոր գուք... կկարողանաք Ադրբեյջանական Խորհրդային Հանրապետությունն Աքեելքի գալքի խորհրդային Հանրապետությունների համար որինակ գարձնել<sup>4)</sup>: (Շահումյանի անվ. ինստիտուտի միասնական կուսարիսիլ):

Մեր յերկրում սոցիալիզմի փայլուն հաղթանակի հետևանքով, բոլշևիկյան կուսակցության և անձամբ ընկ. Ստալինի իմաստուն զե-

\*): Ի. ՍՏԱԼԻՆ: Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Էջ 106—107:

կավարության ու անխոնջ հոգատարության շնորհիվ, Խորհրդային Միության ժողովուրդներն ոռւս մեծ ժողովրդի յեղբայրական ողնությամբ ընդմիշտ վերացրել են վաղեմի փաստական անհավասարությունը:

Լենինյան—ստալինյան ազգային քաղաքականության այդ մեծագույն հաղթանակի վառ որինակ են հանդիսանում այն նշանակալից հաջողությունները, վոր աղբեկանական ժողովուրդը ձեռք ե բերել խորհրդային իշխանության տարիներում, հատկապես ստալինյան յերկու հնգամյակի տարիների ընթացքում:

Ոռւս մեծ ժողովրդի յեղբայրական ողնությամբ, Աղբեկանի աշխատավորները, վերացնելով ամեն մի տնտեսական և կուլտուրական հետամնացություն, Աղբեկանն ՝ “ամենահետամնաց, նահապետական—ֆեոդալական հարաբերությունների յերկրից” (Ստալին) դարձրել են որինակելի սոցիալիստական հանրապետություն Սրբելքի սահմանադում, հանրապետություն, վորը 1936 թվականից անմիջականորեն մտել ե տասնմեկ հավասար Խորհրդային Հանրապետությունների պահանջաների համաստեղության մեջ:

Խորհրդային Աղբեկանի, ինչպես և բոլոր միութենական հանրապետությունների փարթամ ծաղկման այդ փաստը նոր հզոր հաստատում ե ընկեր Լենինի այն նախագուշակության, թե ՝ “առավել առաջավոր յերկրների պրոլետարիատի ողնությամբ հետամնաց յերկրները կարող են անցնել խորհրդային կարգերին և զարգացման վրոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, առանց անցնելու զարգացման կապիտալիստական ստադիան”:

Մեր անծայրածիր հայրենիքի բազմաթիվ ժողովուրդները, վորոնք մինչև հեղափոխությունն ապրուել ելին հակիմենական աղքատության, մթության ու ստորացման մեջ, Խորհրդային իշխանության որով ձեռքբերին նոր, ուրախալի կյանք, Ամբողջ բազմազդ խորհրդային ժողովրդի հսկայական քաղաքական ակտիվության հիման վրա, միասնական յեղբայրական բարեկամության մեջ մեր միութենական հանրապետությունները, նրանց թվում և շքանշանակիր Աղբեկանը, նոր, կուլտուրական կյանք են կասուցում ամբողջ ժողովրդի համար:

Մեր հայրենիքի ժողովուրդների ինչպես եկոնոմիկայի, այնպես և կուլտուրայի մեջ առաջացած հսկայական փոփոխությունները կարելի յետեսնել տասնմեկ միութենական հանրապետություններից ամեն մեկի որինակով:

Բոլոր այդ հսկայական հաջողությունները, նվաճումները գրի յեն առնված Խորհրդային Միության ժողովուրդների անխախտ որենքի—մեծ Ստալինյան Սահմանադրության մեջ, վորը հանդիսանում ե խորհրդային ժողովուրդների յեղբայրական միության ամենավառ փաս-

տաթուղթը, միություն, վորը հաստատված ե կապիտալիստական շահագործումից մաքրված հոգի վրա:

Ստալինյան Սահմանադրության մեջ վառ վոսկե տառերով ե փայլում 132-րդ հոդվածը, վորն ապահովում է ԽՍՀՄ առանց ազգի խտրության բոլոր քաղաքացիների իրավահավասարության որենսդրական յերաշխիքները.—

՝ իրավունքների վորեկիցն ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը կամ, ընդհակառակը, քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը՝ յելնելով նրանց ռասայական և ազգային պատկանելիությունից, ինչպես նաև ռասայական կամ ազգային բացառիկության, կամ ատելության ու արհամարհանքի ամեն տեսակի քարոզ—պատմվում են որենքով:

Ստալինյան Սահմանադրությամբ մեր յերկրում յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունք և ապահովում:

Ազգությունների իրավահավասարությունն իր արտահայտությունն ե ստանում նաև Խորհրդային պետության մեջ իշխանության բարձրագույն որգանների կառուցման մեջ:

ԽՍՀՄ բարձրագույն որենսդրական որդանում Ազգությունների Խորհրդի առկայությունը Խորհրդային գեմոկրատիայի ամենավառ արտահայտությունն ե, վորի ժամանակ՝ որենսդրությունը յելնում ե վոչ միայն ամբողջ Միության աշխատավորների լայն մասսաների ընդհանուր շահերից, այլև յուրաքանչյուր ազգության առանձին սպեցիֆիկ շահերից:

Էստրական իրավունքը Խորհրդային Միությունում աշխատավորների անկապտելի իրավունքն ե՝ անկախ նրանց ռասայական և ազգային պատկանելիությունից: Խորհրդային ամբողջ ընտրական սիստեմն ուղղված ե այն բանին, վորպեսզի, տեղական պայմաններին համապատասխան, վորքան կարելի յե բազմազդ աշխատավոր ընակչությունն ավելի լայն կերպով ընդգրկվի յերկրի քաղաքական կյանքի մեջ:

Միութենական ու ավտոնում հանրապետությունների զարգացումը, ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամությունն ու համերաշխությունն ամբողջ աշխարհին ցույց են տալիս, թե հաղթանակած սոցիալիզմի յերկրում ինչպես և աճում ու ամրանում ժողովուրդների յեղբայրական համագործակցությունը՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով:

Խորհրդային Միության ազգությունների այդ յեղբայրական ընտանիքում, ոռւս մեծ ժողովրդի և մեր յերկրի մյուս բոլոր ժողովուրդների հետ անխախտ բարեկամությամբ աղբեկանական ժողովրդը կառուցում ե յերշանիկ և ուրախալի կյանք, պայքարում ե կոմունիզմի հաղթանակի համար:

## ԻՆՉՊԵՍ Ե ՍՏԵՂՄՎԵԼ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Աղբբեջանական ժողովրդի անխախտ բարեկամությունը մեր հայրենիքի յեղայրական ժողովուրդների հետ—կոփիկել ու ամրացել ե շատ դարերի ընթացքում, միատեղ հերոսական պայքարի մեջ ընդդմ ոտարյերկյա հարստահարիչների:

Պատմությունը քիչ նշանակալից որինակներ չգիտե, յերբ աղբբեջանական, վրաց և հայ ժողովուրդները համախմբելով իրենց ուժերն ընդհանուր թշնամու դեմ՝ ջախջախել ու վոչչացըրել են ոտարերկյա հանդուզն նվաճողների անհամար հրոսակախմբերը։ Մեր դարաշրջանից առաջ դեռևս I դարում հոռմեական դավթողների կողմից շրջապատված հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտին ողնության հասան աղբբեջանական և վրացական ջոկատները, վորոնք յեղայրական ողնություն ցույց տվին հայ ժողովրդին։

Մեր դարաշրջանի IV—V դարերում Անդրկովկասը յենթարկվեց սասանյանների իրանական պետության հարձակմանը։ Աղբբեջանական և հայ ժողովուրդները միահամուռ կերպով, մեջք-մեջքի տված պայքարի յելան սասանյան նվաճողների դեմ։ 451 թ. ապստամբություն բարձրացնելով, աղբբեջանցիներն ու հայերն անվեհեր Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ ահեղ ճակատամարտում գլխովին ջախջախեցին իրանական ֆեոդալներին։

Նշելով աղբբեջանական ու հայ ժողովուրդների այդ միատեղ յելության սասանյան լծի դեմ, ընդգծելով այդ ժողովուրդների յեղայրական բարեկամությունը զեռևս այն հեռավոր ժամանակները, X դարի պատմագիր Մովսես Կաղանկատուացին զբել ե, թե „Հայաստանի և Աղվանից (Աղբբեջան—խմբ.) յերկրները մինչև այսոր գտնվել են միահամուռ յեղայրության և անբաժան համաձայնության մեջ“։ \*)

VII—IX դարերի ժամանակաշրջանը նշված ե Անդրկովկասի ժողովուրդների միացյալ ուժերի հերոսական պայքարով ընդդմ արտական հարստահարողների։ Այդ պայքարում բաղմաթիվ փառահեղ սխրագրծություններ են կատարել աղբբեջանցիները, վրացիները, հայերը։ Նրանք արիաբար պաշտպանել են իրենց հայրենիքը հանդուզն թշնամուց, վորն ամեն ինչ հրի ու սրի յեր մատնում։ Այդ պատառական պատերազմի հերոսների—Բաբեկի ու Սասունցի Դավթի անունները մինչև այժմ ապրում են Անդրկովկասի ժողովուրդների հիշողության մեջ։

Անդրկովկասի ժողովուրդների արդեն այն հեռավոր ժամանակները զոյլություն ունեցած բարեկամության մի ուրիշ վառ որինակ և հանդիսանում աղբբեջանցիների ու վրացիների միատեղ պայքարը XI դարում սելջուկ-թյուրքերի արշավանքի դեմ։ Հաջողությամբ կովելով

\*) Մ. Կաղունկատուացի։ Աղվանից պատմությունը, հրատ. 1861թ.։

այդ ընդհանուր թշնամու դեմ, աղբբեջանական և վրաց ժողովուրդը 1122 թ. սեղուկներին վանդեցին Շիրվանից։

Հետագա դարերում աղբբեջանական ժողովուրդն Անդրկովկասի յեղայրական ժողովուրդների հետ մեկտեղ պայքարում ե իրանական շահերի ու թյուրքական սովորական ժամանակների դեմ, իսկ այնուհետև ցարական ինքնակալության ու նրա հավատարիմ դաշնակիցների՝ խաների, բեկերի ու բուրժուազիայի դեմ։

Ցարիզմը, XIX դարի սկզբին զավթելով Աղբբեջանը, դիտավորյալ կերպով այնտեղ մշակում եր նահապետական — ֆեոդալական ձնշումը՝ մասսաներին ստրուկության և տղիտության մեջ պահելու համար։ Ցարական սատրապները, բուրժուազիան, կալվածատերերն ու նրանց գործակալները — հականեղափոխական բանդիտ մուսավաթականները, եսերները, մենշեվիկները և ժողովրդի այլ թշնամինները բոլոր միջոցներով Անդրկովկասի ժողովուրդների միջն աղբային յերկպառակության պլրովակացիա եյին անում՝ լայն աշխատավորական մասսաների ուշագրությունը հեղափոխական պայքարից հեռու քաշելու համար։

Արյունաբրու ցարիզմը և նրա գիշատիչ չինովնիկները կապիտալիստների, խաների ու բեկերի հետ միացած կողովատում եյին աղբբեջանական ժողովրդին և ծաղրանքի յենթարկում նրան։

„XIX դարի վերջին, XX դարի սկզբին աղբբեջանական ժողովրդին, Աղբբեջանի աշխատավորներին ողնության և դալիս Բազվի պանծալիք քաղմազդ պլրուետարիալը։

Բազվում և Անդրկովկասում բոլշևիզմի՝ հիմնագիր մեծ Ստալինի ղեկավարությամբ, Բազվի բազմազդ պլրուետարիալը, ինքը կոփելով ցարիզմի դեմ մղող անեղ մարտերում, կազմակերպում և աղբբեջանական ժողովրդին, նրան վճական մարտերի պատրաստելով բանվոր գասակարգի աղատավրման համար, բոլոր աշխատավորների աղատագրման համար“ (Աղբեկ(բ)կ XIV համագումարում ընկ. Մ. Զ. Բազիրովի արտասանած ճառից)։

Բազվի պլրուետարիալի և նրա առաջավոր ջոկատի—Բազվի և Աղբբեջանի բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ պանծալիք պատմությունն ամենասերտ կերպով կապված ե մեծ Ստալինի անվան և հեղափոխական գործունեյության հետ։

Հեղափարելով Բազվի պլրուետարիալի և Անդրկովկասի բոլոր աշխատավորների հեղափոխական պայքարը, դաստիարակելով նրանց պլրուետարական ինտերնացիոնալիզմի վզգով՝ ընկեր Ստալինը կափել ե նրանց դասակարգային մարտերի կրակում, ստեղծել Աղբբեջանի ու ամբողջ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, Բազվուն գարձրել բոլշևիզմի անխորտակելի ամբոց։

1905—1907 թ. թ. ոռւսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում ցարական սատրապները, ազգային բուրժուազիայի հետմիասին, ձգտելով մասսաներին հետքաշել հեղափոխական պայքարից, ազնելով ազգային յերկառակություն ստեղծել Աղբերեջանի աշխատավորների միջև, 1905 թվականի փետրվարին հայ-թուրքական յեղայրասպան կոտորածի պլովակացիս սարքեցին:

Մերկացնելով ցարիզմի այդ գայլի քաղաքականությունը, Բագվերով լեռները, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, ամրացրին Բագվելորետարիատի ինտերնացիոնալ համերաշխությունը և վճռական հականարդած տվյալն ցարական դահիճների արյունահեղ պրովակացիաներին:

...Միանգամից կազուրվելով հայ-թուրքական կոտորածից, Բագվելորովետարիատը պայքարի յենետվում, խանդավառությամբ վարակելով ամբողջ կովկասը: (Ստալին, „Խորհրդակցությունը և բանվորները“, Բակինումի Պրոլետարի“ թերթի 1908 թ. 20/VII № 5-ի հավելված):

Հսկայական ինտերնացիոնալ-դաստիարակչական աշխատանք տանելով աշխատավորների լայն մասսաների մեջ, Աղբերեջանի և ամբողջ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, վոր ստեղծվել ողեկավարվել են ընկեր Ստալինի կողմից, իսկական պրոլետարական ինտերնացիոնալդմի հիանալի որինալի եյին ներկայացնում:

„Իրենց առաջ գալու ամենասկզբից (90-ական թ. թ. սկզբին), — գրել ե ընկեր Ստալինը, — կազմակերպությունները կովկասում կը ում եյին խստորեն ինտերնացիոնալ ընույթ: Վրացի, սուս, հայ և մուսուլմանական բանվորների միասնական կազմակերպություն, բանվորներ, վորոնք համերաշխ պայքար եյին մղում թշնամիների դեմ, — այդ եր կուսակցական կյանքի պատկերը“:\*)

Վ. Ի. Լենինն ամբողջ ուժով ընդգծել ե, վոր Անդրկովկասյան բոլշևիկների աշխատանքը, վորոնք գլխավորվում եյին ընկեր Ստալինի կողմից, ազգային հարցի ճիշտ լուծման փայլուն որինակ և տալիս:

Մեզ մոտ կովկասում, — գրել ե Լենինը, — ս.-դ. վրացիները + հայերը + թաթարները + ուստաներն ավելի քան տարի միասին աշխատում եյին միասնական ս.-դ. կազմակերպության մեջ:

Դա ֆրազա չե, այլ ազգային հարցի պրոլետարական լուծումն“:\*\*)

Բոլոր ազգությունների բանվորներին ու գյուղացիներին պայքարի հանելով ինքնակալության ու կապիտալիզմի դեմ, Անդրկովկասի բոլշևիկները վճռականապես մերկացրին ու ջախջախեցին մենակիներին, եսերներին, մուսավաթականներին, դաշնակներին, բուրժուական նացիոնալիստներին — բուրժուազիայի այդ ստորագրությունը սպասավորներին, վորոնք ջանում եյին աշխատավորների գիտակցությունը թունափորել նացիոնալիզմի թույնով:

\*) Ի. Վ. ՍՏԱԼԻՆ: „Սոցիալդմի ճանապարհին“: Առց.-գեմոկրատ թերթ № 30, 1913 թ. հունվարի 12/25-ին:

\*\*) Լենին, Յերկ. ժող., հատոր XVI, էջ 328:

Հենց շնորհիվ Անդրկովկասի բոլշևիկների անխոնջ հեղափոխական դրոժունիցության ընկեր Ստալինի գլխավորությամբ 1905—1917 թվականներին... „Անդրկովկասի ազգությունների բանվորների և առաստարակ աշխատավորների միջև նկատվում եր լիակատար յեղբայրական համերաշխություն... յեղբայրության կապերը հայ, վրացի, ադրբեյջանցի և ուս բանվորներին կապում եյին սոցիալիստական մինտականիքի մեջ (ՍՏԱԼԻՆ: „Վրաստանում և Անդրկովկասում Կոմունիզմի հերոսական խնդիրների մասին“: Զեկուցում Թիֆլիսի կուսկազմակերպության ժողովում 1921 թ. հուլիսի 6-ին):

Այսպես, ընկեր Ստալինը դեռևս հեղափոխական շարժման արշարույթին, ղեկավարելով Աղբերեջանի բոլշևիկների աշխատանքը, Բագվելորետարիատին դաստիարակել և ինքնակալության ու կապիտալիզմի դեմ բոլոր ազգությունների աշխատավորների համերաշխ պայքարի վորովով:

Լենինյան — ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման հիանալի որինակներ ցույց տալով՝ ընկեր Ստալինն Աղբերեջանում իր կատարած աշխատանքի ընթացքում Բագվի առաջավոր բանվորների, աղբերեջանական ժողովրդի լավագույն զավակների թվից հոգատարությամբ աճեցրել ու դաստիարակել և բոլշևիկյան ամուր ակտիվ, վորի մեջ եյին գտնվում բոցավառ հեղափոխականներ, լավագույն ստալինյաններ ընկ. ընկ. Խանլար Սաֆարալիկը, Կազի Մահմեդը, Մուխտադիրը, Բունիաթ Սարգարովը, Ամիր Ասլան Տուրեցկին և սոցիալիզմի համար մյուս անհողողդ մարտնչողները:

Ստալինյան ուսակցիայի տարիներին, հեղափոխական նոր վերելքի ժամանակաշրջանում, առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ, վերջապես, Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և անցկացման ժամանակաշրջանում Բագվի հերոսական պրոլետարիատը, ղեկավարվելով Լենինի — Ստալինի կուսկության կողմից, միշտ ընթացել և համառուսաստանյան բանվորական շարժման առաջին շարքերում:

Բագվի պրոլետարիատը, կոփված ընկեր Ստալինի կողմից, գառնում և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի դրոշակակիրը: Բագվի պրոլետարիատի հեղափոխական պայքարը վոգենչներ և Անդրկովկասի ամբողջ պրոլետարիատին, նրան ծառայելով վորպես վարակիչ որինակ և կենդանի փարոս, վորը լուսավորում ե դեպի սոցիալիզմը տանող ուղին“\*\*):

Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունը բուրժուական-կալվածատիրական ճնշումից ազատագրվելու համար աղբերեջանական ժողովրդի մղած պայքարություն նոր ետապ եր:

\*\*) Ի. Վ. ՍՏԱԼԻՆ: „Անդրկովկասի հականեղափոխականները սոցիալիզմի դիմուկ“, էջ 27:

Դասակարգային հաղթական մարտերի հետևանքով՝ 1918 թ. մարտին Բագվի պրոլետարիատը, բոլցկիկների կուսակցության զեկավարությամբ, ջախջախեց հականեղափոխության ուժերը և իշխանությունն իր ձեռքը վերցրեց: Գործերով Լենինի և Ստալինի ցուցումով, Խորհրդային իշխանությունը բագվում ընկ. ընկ. Շահումյանի, Զափարիձեյի, Ազիզբեկովի, Ֆիոլետովի, Միկոյանի գլխավորությամբ միշտարք սոցիալիստական միջոցառումներ կիրառեց: Բագվի ժողկոմի խորհրդի գելքետներով նացիոնալիզացիայի յենթարկվեցին բանկերը, նավթային արդունաբերությունը, կասպյան առևտրական նավատորմը, կոնֆիսկացիայի յենթարկվեցին բեկ-խանական հողերը՝ գյուղացիությանը հանձնելու համար:

Վոգեչնչվելով Լենինի և Ստալինի կողմից, Բագվի պրոլետարիատն ամբողջ հեղափոխական յեռանդով ձեռնամուխ յեղավ նավթային արշունաբերության վերականգնմանը, ցույց տվեց աշխատանքային հերոսության հրաշալի որինակներ, չնայած աշխատանքի դժվարին պայմաններին քաղաքացիական պատերազմի իրադրությունում, և ամենակարճ ժամկետում ձեռք բերեց նավթահանույթի արագ ավելացում: Նավթային տնտեսության վերականգնման համար մղվող յեռանդուն պայքարի հետ միաժամանակ Բագվի պրոլետարիատն անընդհատ ավելացրեց նավթի արտօհանությունը գետի Խորհրդային Ռուսաստան, հենց դրանով մեծ ոգնություն ցույց տալով Ռուսաստանի պրոլետարիատին, Կարմիր Բանակին, վոր հերոսաբար ճակատամարտում եր ինտերվենտների ու սպիտակ-բանդիտների գեմ:

Բագվի բոլցկիկներն ընկ. ընկ. Շահումյանի, Ազիզբեկովի, Զափարիձեյի, Ֆիոլետովի, Միկոյանի զեկավարությամբ 1918 թվականին մեծ աշխատանք են կատարել լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունն իրագործելու, պրոլետարիատի միությունն աշխատավոր գյուղացիության հետ ամրացնելու, Ազրբեջանի շրջաններում խորհրդային իշխանություն հասատելու գործում:

Հականեղափոխական ուժերի ողակը ավելի ու ավելի ամուր եր սեղմակում նավթի քաղաքի շուրջը: Անզիփական ու գերմանա-թյուրքական ինտերվենտների և մուսավաթական բանդաների զրոհի տակ, դաշնակների, եսերների, մենշևիկների ստոր քայլացիչ գործունեյության հետեւանքով Խորհրդային իշխանությունը Բագվում 1918 թվականին, չնայած Բագվի պրոլետարիատի հերոսական պայքարին, ժամանակակիրապես ընկալի: Անզիփական ինտերվենտները գաղանաբար հաշվեհատ կատարեցին Ազրբեջանի աշխատավորների նկատմամբ Նրանք „Անզիփական տարան Բագվի 26 զեկավար բոլցկիկներին—ընկ. ընկ. Շահումյանին, Ֆիոլետովին, Զափարիձեյին, Մալիկինին, Ազիզբեկովին, Կարգանովին ու մյուսներին, եսերների ոգնությամբ նրանց

գաղանաբար գնդակահարեցին“: (Համեր(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, եջ 225—226):

Ազրբեջանում սկսվեց մուսավաթական հականեղափոխական բանդիտների տիրապետության արյունահեղ շրջանը:

Մուսավաթականներն Ազրբեջանի բանվորներին ու գյուղացիներին ձգեցին դաֆան ճնշման լծի տակ, նավթահանքերն ու գործարանները վերադարձրին բուրժուազիային, հողերը—խաներին ու բեկերին: Հականեղափոխական մուսավաթական կառավարությունը դաժանորեն հալածում եր բոլցկիկներին, բանտերը նետեց և գաղանաբար տանջեց շատ հարյուրավոր ու հազարավոր առաջավոր բանվորների ու դյուղացիների, վորոնց թվում չարագործորեն սպանվեցին ազրբեջանական ժողովրդի լավագույն զավակները, բոցավառ հեղափոխականներ Կաղի Մահոմեթը, Մուստաքիլը, Բունիաթ Սարդարովը, Ամիր Ասլան Տուրեցկին և ուրիշները:

Ճգնելով խեղդել Ազրբեջանի աշխատավորների հեղափոխական շարժում՝ մուսավաթականներն ու դաշնակները 1920 թվականի փետրվար—մարտին Շուշի քաղաքում, Խանքենդում և ուրիշ տեղերում կաղմակերպեցին յեղայրասպան կոտորած:

Վորակես պատասխան մուսավաթական բանդիտների արյունահեղ պրովակացիաններին՝ ազրբեջանական բոլցկիկները, հետեւլով Լենինի և Ստալինի ցուցումներին, ավելի ամուր կերպով համախմբեցին իրենց գրոշի շուրջը բոլոր ազգությունների աշխատավորներին, ամրացրին պրոլետարիատի միությունը գյուղացիության հետ ու բուրժուատն կալվածատիրական կառավարության դեմ զինված ապստամբության համար յեռանդուն նախապատրաստություն ծավալեցին:

1920 թ. ապրիլի 28-ի պանծալի որն ազրբեջանական ժողովուրդը, ղեկավարվելով Լենինի—Ստալինի մեծ կուսակցության կողմից, ուսումնեծ ժողովրդի յեղայրական աջակցությամբ, տալալեց մուսավաթական ատելի լուծը և անխախտ կերպով Ազրբեջանում կանգնեցրեց Խորհրդային իշխանության ալ դրոշը:

Ազրիլյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի կազմակերպիչները հանդիսացան մեծ Ստալինի մերձավորագույն զինակիցներ, բոցավառ բոլցկիկներ ընկ. ընկ. Ս. Որջոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը և Ա. Միկոյանը:

Ազրբեջանում Խորհրդային իշխանության հաղթանակն ազրբեջանական ժողովրդի հերոսական պատմության մեջ նոր վառ եջ բաց արեց:

Խորհրդային իշխանության հաղթանակն ամբողջ Անզիփկաստում ընդմիշտ վերջ տվեց ամեն տեսակի ազգային յերկառակության, բոլոր անհրաժեշտ պայմաններն ստեղծեց Անզիփկասի ժողովուրդների բարեկասության հետագա ամրացման համար, նրանց միասնական ինտերնացիոնալ ընտանիքի մեջ միացնելու համար, յերկրամա

սում աղբային խաղաղության որինակ ստեղծելու համար, վոր „տեսնվածքն ըռլուժուաղբայի որով և անհնարին և ըռլուժուական կարգերում“։ (Լենին, հատոր XXVI, էջ 191):

Լիովին համապատասխան լենինի և Ստալինի ցուցումներին, նրանց հավատարիմ աշակերտները՝ ընկ. ընկ. Որջոնիկիձեն ու Կիրովը հաստատուն կերպով ու հետևողականորեն Անդրկովկասում կիրառեցին բոլշևիկյան, լենինյան-ստալինյան աղբային քաղաքականությունը։ Յերկրամասում աշխատավորների ինտերնացիոնալ համերաշխության ամրացման գործում իր ժամանակ մեծ դեր խաղաց 1922 թ. կազմակերպված Անդրկովկասյան ֆեդերացիան։

Անդրկովկասյան բոլշևիկների այդ ամբողջ հսկայական աշխատանքն ընթացավ դաժան անհաշտ պայքարի մեջ ընդդեմ տրոցկիստական-բուհարինական ու բուրժուական-նացիոնալիստական բանդիտների և ջախջախված հականեղափոխական կուսակցությունների տականքների — մուսավաթականների, դաշնակների, մենշևիկների, վորոնք ձգուում եյին ջատել Անդրկովկասի ժողովուրների յեղբայրական միությունը։ Զախջախելով այդ ամբողջ թշնամական վոհմակը, անդրկովկասյան բոլշևիկներն ընկ. ընկ. Որջոնիկիձեյի ու Կիրովի գլխավորությամբ անխոնջ կերպով Ադրբեջանի և ամրող Անդրկովկասի աշխատավորներին դաստիարակում եյին ինտերնացիոնալիզմի և լենինի։ Ստալինի գործին անսահման նվիրվածության վոգով։ Նշելով այդ աշխատանքում ձեռք բերած մեծ հաջողությունները, Ս. Մ. Կիրովը Ադրե(բ)կ VIL համագումարում ունեցած իր յելույթում ասել և այն մասին, վոր

„Այստեղ Ադրբեջանում մեր Խորհրդային Միության մեջ աղպային իմաստով յերջանիկ քաղաքը — դա Բագուն ե։ Զկա խորհրդային այլ քաղաք, վորտեղ այսքան մեծ քանակությամբ աղդություններ լինելին և վորտեղ տարբեր աղգությունների բանվորներն ապրելին այսպիսի համերաշխ համախմբված, կոփված ընտանիքով“։ («Բակ. Ռաբոչի» թերթ, 1925 թ. դեկտ. 2):

Ս. Որջոնիկիձեյի, Կիրովի, Միկոյանի և լ. Բերիայի ժործված դեկավարությամբ Ադրբեջանի աշխատավորները խոշորագույն հաջողություններ ձեռք բերին մեր հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման գործում նախարարի համար մղվող պայքարում հսկայական դժվարություններ հաղթահարվեցին։ Անսպելի կերպով Կիրովի անվան հետ և կապված նոր նավթահանքերի շինարարությունը և շահագործման տալը, ինչպես, որինակ Իլիչի բուխտան և լենինի անվան նավթահանքում մի շարք հրապարակներ։

Կատարելով ընկեր Ստալինի ցուցումն աղբային հանրապետությունների անտեսական հետամնացությունն ամենաարագ կերպով վերացնելու անհրաժեշտության մասին, Կիրովը անխոնջ կերպով աշխատում եր Ադրբեջանի ինդուստրացման վրա։ Ադրե(բ)կ III համագումարում նա ասել ե-

«Մենք մեր առաջ ինդիր ենք դնում, իսկ այդ անելու հնարավորություն մենք ունենք, հասնել նրան, վորպեսզի մեր յերկրամասը զարձնենք ինդուստրիալ յերկրամաս»։ Լենինյան-ստալինյան աղբային քաղաքականության համապատասխան ընկ. ընկ. Որջոնիկիձեն և Կիրովը հատուկ ուշադրություն հատկացրին Ադրբեջանի շրջաններում, մասնավորապես Գյանջայում, Նուխում և մյուս քաղաքներում արդյունաբերական ոջախներ ստեղծելուն։ Յերեք տարի հետո, —ասել ե 1925 թ. ընկ. Կիրովը, —մենք Գյանջայում կունենանք խոշոր տեքստիլ կենտրոն»։

Ընկ. Կիրովի խոսքերը մարմնացել են կյանքում։ Հենց նա յե աջակցել խորհրդային Գյանջայի հզոր ծաղկմանը, վոր այժմ կրում և նրա պահածալի անունը։

Ընկ. Ընկ. Որջոնիկիձեն, Կիրովը, Միկոյանը և Բերիան բացառիկ ուշադրություն են հատկացրել Ադրբեջանի աշխատավորների նյութական-կենցաղային դրության բարելավմանը։ Բուրժուական նացիոնալիստների, ժողովրդի այդ ամենակատաղի թշնամիների գեմ մղած պայքարում, թշնամիներ, վորոնք Ադրբեջանի գյուղացիությունը հակաղրում եյին Բագվի պլուղետարիատին, նրանք անխոնջ կերպով ամրացնում եյին բանվորների ու գյուղացիների միությունը։

«Մոմենտի ինդիրներից խոշորագույնը, —ասել ե ընկ. Կիրովը, — զա այն ե, վոր մենք անվանում ենք քաղաքի կապ գյուղի հետ, բանվորների ու գյուղացիների միության ամրացում, ոգնություն մեր գյուղին»։

Ս. Որջոնիկիձեյի, Կիրովի, Միկոյանի և Բերիայի ղեկավարությամբ Ադրբեջանի գյուղատնտեսության վերականգնման ու հետագա զարգացման գործում մեծ հաջողություններ են ձեռք բերվել։

Ադրբեջանի գյուղական տնտեսության մեջ վուոգումը չափազանց կարևոր նշանակություն ունի։ Դեռևս 1921 թ. լենինը Ս. Որջոնիկիձեյին գրած նամակում նշել ե, թե պետք ե

„... վուոգումն Ադրբեջանում առաջ շարժել Բագվի ռեսուրսների ոգնությամբ, հողագործությունն ու անասնապահությունը զարգացնելու համար“...\*)

Յենելով ընկ. լենինի ցուցումից՝ ընկ. ընկ. Որջոնիկիձեն և Կիրովը բոլոր միջոցներն են ձեռք առնում Մուղանում և Ադրբեջանի մյուս շրջաններում վուոգչական աշխատանքներն ուժեղացնելու համար։

Որջոնիկիձեյին ու Կիրովին բացառիկ ծառայություն և պատկանում Ադրբեջանում բամբակարուծությունը վերականգնելու և զարգացնելու գործում։

Ընկեր Ստալինի լավագույն զինակիցները — Որջոնիկիձեն, Կիրովը, Միկոյանը և Բերիան ամեն կերպ նպաստել են Խորհրդային Ադրբեջանի ձեռվաղբային և բովանդակությամբ սոցիալակատական կուլտուրայի զարգացմանը։

\*) Լենին, հատոր XXVI, էջ 188.



Նրանք համառորեն ու վճռականորեն պայքար են մզել ազբ-  
բաջանուած ազատագրման համար։ Հարյուրավոր և հաղարավոր կա-  
նայք, չաղըան դեն գցելով, դարձել են սոցիալիստական շինարարու-  
թյան ակտիվ մասնակիցներ։

Աղքարեցանում՝ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը  
կյանքում մարմնացնելու վառ որինակն եւ հանդիսացել 1923 թ. Լե-  
նային Դարաբաղի Ավտոնոմ մարդի և մի քիչ ուշ Նախիջևանի ԱԽՍ  
ստեղծումը։

Լենային Դարաբաղի Ավտոնոմ մարդի կազմակերպման առթիվ  
Աղքարեցանությունը 1923 թ. հուլիսի 7-ի գեկրետում ասվում եր։

Ազգային ճնշման ու անհավասարության վոչնչացումը, ինչ  
ձևով ել վոր նա գրանորվելու լինի, ազգային թշնամությունը և  
ատելությունն աշխատավոր ժողովուրդների ինտերնացիոնալ հա-  
մերաշխությամբ, միամնական պետական միության մեջ ժողո-  
վուրդների յեղայրական աշխատակցությամբ փոխարինելը բան-  
վորա-գյուղացիական հեղափոխության և Խորհրդային իշխանու-  
թյան հիմնական իմադիրներից մեկն են հանդիսանում։ \*)

Ի կատարումն այդ ինդիրի, լենային Դարաբաղի հայկական մասից  
ստեղծեց ավտոնոմ մարդ, վորը հանդիսանում և Աղքարեցան քաղաքացուցիչ  
մասը։ Դա Խորհրդային իշխանության խոշոր հաղթանակներից մեկն եր,  
վորովետեւ միմիայն նա լենինյան-ստալինյան ազգային քաղաքականու-  
թյան հիման վրա ճշտորեն դրեց և լուծեց այդ կարեռագույն հարցը։

Ընկ. ընկ. Որջոնիկիձեյի, Կիրովի, Միկոյանի և Բերիայի կողմից  
լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետեւղական և  
անշեղ կիրառման հետեւանքով կոփեց Անդրկովկասի ժողովուրդների  
անխախտ յեղբայրական բարեկամությունը, ձեռք երեված Աղքարեցանի,  
Վրաստանի, Հայաստանի Խորհրդային Հանրապետությունների չտես-  
նըված ծաղկումը, լայնորեն ծավալված և սոցիալիստական շինարարու-  
թյունն Աղքարեցանում և ամբողջ Անդրկովկասում։

...հոգիդ ուրախանում և այն բոլոր վիթխարի հաջողություն-  
ներից, վոր այդ ժամանակաշնթացքում ձեռք երերել Աղքարեցանը,՝  
—ասել ե Սերգո Որջոնիկիձեն 1936 թ. Կրեմլում Աղքարեցանի  
պատվիրակության ընդունելության ժամանակ։ \*\*)

## ԼԵՆԻՆՅԱՆ-ԱՏԱԼԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՎԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԴՐԵՋԱՆ

Եր յերկրում սոցիալիզմի փայլուն հաղթանակի հետեւանքով Խոր-  
դրդային Աղքարեցանն իր գոյության 20 տարվա ընթացքում աճել դար-

\*) Աղքարեցան որենքների ժողովածու, 1923 թ., էջ 384—385։

\*\*) „Պատվա” թերթ 1936 թ. հունվ. 24-ին։

ձել ե որինակելի շքանշակիր սոցիալիստական հանրապետություն՝  
հզոր ինդուստրիայով և առաջավոր կոլեկտիվացված գյուղական տնտե-  
սությամբ, ձեռվ ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կու-  
տուրայի ծաղկումով։

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում զարգացման  
վիթխարի ուղի յե անցել Բագվի նավթային արդյունաբերությունը-  
նորմեկն վերակառուցված նավթահանքերն ու գործարանները սար-  
քավորված են այժմ ժամանակակից տեխնիկայի վերջին խոսքի համա-  
ձայն։ Բացված ու շահագործման են հանձնված նոր նավթային շրջան-  
ներ, վորոնք ամենալայն հեռանկարներ են բաց անում նավթահանույ-  
թի և մեր սոցիալիստական ժողովրդական տնտեսությանը նավթ մա-  
տակարարելու հետագա ավելացման գործում։

Խորհրդային Աղքարեցանի նավթային արդյունաբերության աճման  
հետ միասին աճել ու զարգացել են հանրապետության նոր ինդու-  
ստրիալ կենտրոնները—Կիրովարագը, Նուխին, Ստեփանակերտը, Նա-  
խիջեվանը և այլն։

Աղքարեցանական ժողովուրդը հսկայական հաջողություններ ե ձեռք  
բերել զյուղական տնտեսության բնագավառում։ Այնտեղ, ուր հարյուր հա-  
զարավոր մանր-մունը և ցաք ու ցրիվ զյուղացիական տնտեսություններ  
դժվարությամբ մի կերպ ապրում ենին, ներկայում աճել ու ամրացել են  
կոլտնտեսություններն ու խորհնտեսությունները, աշխատում են տասն-  
յակ ՄՏ կայաններ, վորոնք ունեն բոլոր նորագույն գյուղատնտեսա-  
կան մեջենաները։ Դառնալով Խորհրդային Միության յերկրորդ բամ-  
բակային բաղան, Աղքարեցանը, մեծ Ստալինի ցուցումով, այժմ դառ-  
նում ե մեր յերկրի նաև մերձարևադարձային բաղան։

Ցերջանիկ, ունեոր, կուլտուրական կյանքով են ապրում սոցիալիս-  
տական Աղքարեցանի, ինչպես և ամբողջ հզոր Խորհրդային Միության  
աշխատավորները, վորոնք չզիաեն գործազրկության, սովի, կարիքի-  
և աղքատության տանջանքներ։

Շնորհիվ մեր կուսակցության կողմից լենինյան - ստալինյան ազ-  
գային քաղաքականության անշեղ կենսագործմանը, աղքարեցանական  
ժողովուրդը հասել ե ձեռվ ազգային և բովանդակությամբ սոցիա-  
լիստական իր կուլտուրայի մեծագույն վերելքին ու ծաղկմանը։

Դեռևս մի ինչ-վոր յերկու տասնյակ տարի սրանից առաջ Աղքարե-  
ցանի բնակչությունը համարյա գլխովին անգրագետ եր։

Ցարական ինքնակալությունն ամեն ինչ անում եր նրա համար,  
վորպեսզի աղքարեցանական ժողովրդին պահի տղիտության և կրօնական-  
ֆանատիզմի խավարի մեջ, նա ամեն կերպ խրախուսում եր մոլլաների-  
և կրօնամոլների գործունեյությունը։ Սևարյուրակային վոստորգովը  
Գետական դումայում ցինիկաբար հայտարարել ե, թէ՝ «Թուրքելն ամենա-

Համակրելի ժողովուրդն են, վորովհետև նրանք թերթեր ու ինտելիգենս-ցիա չունեն»:

Ավելի լավ չեր դրությունը և մուսավաթականների որով, վորոնք ամեն կերպ ավելում և ճնշում ենին ադրբեջանական ժողովրդի դարերով ստեծված կուլտուրան:

Միմիայն պլուետարական հեղափոխության հաղթանակը, Ադրբեյ-ջանի արդյունաբերության և գյուղական տնտեսության զարգացման հետ միասին, լիովին ապահովել և ադրբեջանական ժողովրդի նաև կուլտուրական զարգացումը: Խորհրդային իշխանության ժամանակա-ընթացքում, մասնավանդ ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում, Ադրբեջանում, ինչպես և մեր ամերուջ յերկրում, կատարվել է իսկական կուլտուրական հեղափոխություն:

„Ժողովրդի կուլտուրական զարգացման տեսակետից, —ասել ենկ. Ստալինը Համ Կ(բ)Կ XVIII համագումարում տված իր պատմական դեկուցման մեջ, —հաշվեալական ժամանակաշրջանը յեղել է ձըշ-մարտապես կուլտուրական հեղափոխության ժամանակաշրջան: ԽՍՀՄ ազգությունների լեզուներով ընդհանուր-պարտադիր տար-րական կրթության կենսագործումը, բոլոր աստիճանների դպրոց-ների ու սովորողների թվի աճումը, բարձրագույն դպրոցներից շրջանավարտ մասնագետների թվի աճումը, նոր, խորհրդային ին-տելիկենցիայի ստեղծումը և տմբացումը, —այս և ժողովրդի կուլ-տուրական վերելքի ընդհանուր պատկերը“:

Մեր միութենական հանրապետությունում ստեղծված են բանվոր-ների ու ծառայողների բազմաթիվ ազգբեջանական կադրեր, սոցիալիս-տական խորհրդային ինտելիգենցիայի կադրեր, վորոնք տիրապետել են բոլշևիզմին, անձնազոհ կերպով ու մինչեւ վերջը նվիրված են լենինի-Ստալինի մեծ կուսակցությանը, կոմունիզմի գործին:

Միայն ստալինյան յերկու հնգամյակների տարիների ընթացքում աճել են հազարավոր ինժեներներ, գյուղանատեսներ, բժիշկներ, ուսու-ցիչներ և բարձր վորակավորման ուրիշ մասնագետներ գիտելիքների տարբեր բնակավառներում:

Ադր.ԽՍՀ-ում տարրական և միջնակարգ դպրոցում սովորողների քանակությունը առաջն հնգամյակի վերջի 438,3 հազար հոգուց անել՝ յերկրորդ հնգամյակի վերջին հասել ե մինչև 577,7 հազար հո-գու: Տարրական և միջնակարգ դպրոցում ազգբեջանցի սովորողների թիվը յերկորդ հնգամյակի տարիների ընթացքում 261,2 հազարից հա-սել ե 340,0 հազար հոգու: Բարձրագույն ուսումնական հաստատություն-ներում սովորողների քանակությունը հասել ե 10,8 հազար հոգու, իսկ տեխնիկումներում՝ 22,8 հազար հոգու:

Համաշխարհային գրականության կլասիկների լավագույն աշխա-տությունները մատչելի յեն դարձել ադրբեջանական ժողովրդին: Ադր-

բեջանական մեծ կլասիկներ Նիդամու, Ֆիդուլու, Վագիֆի, Մ. Ալիբունդովի և մյուսների հրաշալի ստեղծագործությունները դարձել են աշխատավորական լայն մասսաների իսկական սեփականությունը: Ներկայումս Խորհրդային Միության ամբողջ հասարակայնությունը պատրաստվում ե տանելու XII դարի հանճարեղ ադրբեջանական պոետ Նիզամի Գյանջևու ծննդյան 800-ամյակը:

Այդ ամենը լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի վառ ցուցանիշն ե հանդիսանում, քաղաքականություն, վորը բոլոր մանր ու մեծ ժողովուրդների համար լիովին ապահովում ե ազատ զարգացում, նրանց եկոնոմիկայի ու կուլտուրայի հզոր բար-գավաճում:

Կուլտուրական զարգացման ընագավառում այդ վիթխարի հաջո-դությունները նվաճվել են տրոցկիստական-րուխարինական, բուրժու-ական-նացիոնալիստական տարրերի ու մուսավաթական ճիվալների դեմ մղած անհաշտ պայքարում, վորոնք բոլոր միջոցներով ժողովրդում եյին ապալել բոլցիկյան կուսակցության մեծ ծրագիրն ազգային հարցի վերաբերյալ: Նրանք ուզում եյին թուլացնել մեր յերկրի ժողո-վուրդների ամուր միտությունը, մասնատել նրանց և հենց գրանով, թուլացնելով, հանճնել իմպերիալիստական գիշատիչների հոշոտմանը: Ադրբեջանական ժողովրդի այդ ամենակատաղի թշնամիները փորձում եյին կազմալուծել խորհրդային դպրոցը, տապալել ոռուսներն լեզվի ուսումնասիրությունը, ադրբեջանական լեզուն աղտոտել նրան խորթ արաբական, ֆարսական, սումանական բառերով և տերմիններով, փոր-ձում եյին պոկել ազգբեջանական ժողովրդին Խորհրդային Միության ժողովուրդների յելբայրական ընտանիքից, Ադրբեջանի աշխատավոր-ների զգին դնել կապիտալիստական ստրուկության լուծը:

Զախարիելով և վոչչացներով ժողովրդի այդ ամենակատաղի թշնամիներին, Ադրբեջանի աշխատավորներն ուղի յեն հարթել սոցի-լիստական կուլտուրայի հետագա ել ավելի հզոր ծաղկման համար:

Խորհրդային Ադրբեջանի կուլտուրայի հետագա աճան և բարգա-վաճան համար մեծ նշանակություն ունի ազգբեջանական գիրը նոր այրուբենի անցկացնելը՝ ոռուսական գրի գրաֆիկայի հիման վրա: Հան-դիսանալով մեր հանրապետության կուլտուրական ել ավելի մեծ վե-րելքի հզոր միջոցը, նոր այրուբենը կնպաստի Խորհրդային Միության յելբայրական ժողովուրդների հետ ազգբեջանական ժողովրդի ստալինյան բարեկամության հետագա ամրացմանը, ել ավելի վառ կիրապով կցու-ցարի այն փաստը, վոր նմեր աչքերի առջև ընթանում ե ազգային կուլտուրաների վոչ միայն վերելքը, այլև այդ կուլտուրաների մեր-ձեցուն իրար միջև: (Մոլոտով):

Ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բնագավառի հսկա-յական հաջողությունները, — վորոնցով ազգբեջանական ժողովրդը

յեկել և աշխատավորների դեպուտատների տեղական խորհուրդների ընտրություններին, ձեռք են բերվել բոլցեկների մեծ կուսակցության զեկավարությամբ, մեր յերկրում լինինյան—ստալինյան աղքային քաղաքականության անշեղ կենսագործման հետևանքով։

«Կուսակցության և կառավարության ոժանդակության շնորհիվ, մեծ հին բազվեցի—մեր առաջնորդ և հարազատ հայր ընկեր Ստալինի ամենորյա ուշադրությամբ, հայրական հոգատարությամբ և ոգնությամբ, Աղրբեջանը դարձել ե մեր սոցիալիստական հայրենիքի փորձամորեն աճող պարտեղը, հայրենիք, վորը հանդիսանում ե ժողովուրդների մեծ ընտանիք, զոդված ստալինյան անխախտելի բարեկամությամբ»։ (Աղբկ(թ)կ XIV համագումարում ընկ. Մ. Զ. Բագրիովի արտասանած ձառից)։

## ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՍՀՄ ԺԱՌՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԱՐ ԱՐՏԱՎԱՅՏԱՒԹՅՈՒՆՆ Ե

ԽՍՀՄ ժողովուրդների մեծ բարեկամությունը, վոր հաստավել ե հաղթանակած սոցիալիզմի յերկրում, աղդային հարցում լինինյան—ստալինյան իմաստուն քաղաքականության հիմնալի արդյունքն եւ ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, վորպես խորհրդային հաստրակության հասարակական-քաղաքական զարգացման շարժիչ ուժը, անխօնիորեն կազմած ե խորհրդային ժողովուրդի բարոյական—քաղաքական միասնության ամրացման հետ, բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի լայն մասսաների մեջ խորհրդային հայրենասիրության հսկայական աճման հետ։

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներն ունեն միասնական, ընդհանուր շահեր, ձգտումներ ու նպատակներ—դա մեր յերկրում կոմունիզմի լիակատար հաղթանակի համար մզկող պայքարն եւ Մեր յերկրի ժողովուրդների շահերի ու նպատակների այդ ընդհանության մեջ ե կայանում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տարբերիչ գիծն աղքային փոխհարաբերությունների ընադավառում, դրա մեջ ե մեր բազմազգ սոցիալիստական պետության ուժի ու ամրության աղբյուրը, «վորի ամրությանը կարող ե նախանձել ամեն մի աղքային պետություն աշխարհի տմեն մի մասում»։ (ՍՏԱԼԻՆ)։

Աղրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, վոր հանդիսանում ե Խորհրդային Միության անկապտելի մասը, ամբողջ յերկրի հետ միասին մտել ե զարգացման նոր շրջանը, անգասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը։

Ստալինյան յերրորդ հնդամյակում նոր վիթխարի ինդիբների հաջող կատարման գործում մեծագույն զենքը, սոցիալիստական շինարարության բոլոր տեղամասերում մեր ամբողջ հետագա աշխատանքի մարտական ծրագիրն ե հանդիսանում ընկեր Ստալինի հանձարեղ զեկուցումը կուսակցության XVIII համագումարում և այդ համագումարի բոլոր վորոշումները։

Ընդհանուր սոցիալիստական աշխատանքում, կոմունիզմի հաղթանակի համար մզկող պայքարում ել ավելի յեն ամրանում մեր մեծ յերկրի ժողովուրդների բարեկամությունն ու յեղայրությունը։

Աղրբեջանի և ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդների այդ սերտ բարեկամությունը հզոր խթան և առաջանակ է բոլոր ազգությունների աշխատավորների բարեկցության չտեսնված վերելքը, կոմունիզմի նրանց միատեղ կառուցումը։

Շքանշանակիր Աղրբեջանի, ինչպես և ամբողջ Խորհրդային Միության աշխատավորներին համակած աշխատանքային նոր հզոր վերելքի վառ արտահայտությունն ե հանդիսանում Սամուր-Դիվիչի ջրանցքի շինարարությունը, վորն սկսվել ե Ղուրայի կուտանտեսականների նախաձեռնությամբ, իսկ այժմ դարձել ե խկական համաժողովրդական դործ, սոցիալիստական Աղրբեջանի բոլոր բանվորների, կոլտնտեսականների ու խորհրդային ինտելիգենցիայի գործը։

Լինինյան—ստալինյան աղքային քաղաքականության փայլուն հաջողությունն ե հանդիսանում քաջարի Կարմիր Բանակի կողմից մեր արյունակից յեղայրներին—արևմտյան ուկրայինացիներին և բելոռուսներին լեհական պաների ատելի լծից տղատելը։ Այդ պատմական դեպքի հետևանքով Արևմտյան Ուկրայինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրված ժողովուրդները, վորոնց հրճանքով վորդ ջունում են՝ սոցիալիզմի յերկրի բոլոր աշխատավորները, մտան խորհրդային քաղաքացիների շաբեքը։ Այսուհետև Ուկրայինան և Բելոռուսիան լիովին վերամիացված են, իսկ

«մեր խորհրդային ընտանիքը 170 միլիոնից դարձել ե 183 միլիոն խորհրդային մարդկանց ընտանիք»։ (ՄՈԼՈՏՈՎ)։

ԽՍՀՄ ժողովուրդների յեղայրական միացման, անխախտ բարեկամության նոր, վառ արտահայտություն հանդիսացան աշխատավորների դեպատաների տեղական խորհուրդների ընտրությունները։

Այդ ընտրություններով ավարտվեց խորհրդային պետական ապարատի վերակառուցումը Ստալինյան Սահմանադրության հիման վրա։ Խորհրդային հայրենաբարեկրից պահանջվում ե բոլցեկորեն պայքարել յուրաքանչյուր տոնն նավթի համար, յուրաքանչյուր կիլոդրամ բամբակի համար, անխոնջ աշխատել մեր հայրենիքի պաշտպանու-

Թյան հղորության հետագա ամրացման վրա, քաջարի Կալմիր Բանակի և Մազմա—Ծովային Նավատորմի ուժեղացման վրա:

Աղբեջանի աշխատավորներն ել ավելի պիտի բարձրացնեն իրենց հեղափոխական դգոնությունը և ամբողջ յեռանդով ամրացնեն մեր խորհրդային հետախուզությունը, ոգնեն նրան՝ լիովին վոչնչացնելու արոցկիստական - բուխարինական և բուրժուական-նացիոնալիստական իմպերիալիստական գործակալության մնացորդներին:

Աշխատավորների գեպուտատների տեղական խորհրդների ընտրություններն ել ավելի ամրացրին մեր սոցիալիստական պետությունը:

Այդ ընտրությունները բոլշևիկյան կուսակցության և սոցիալիզմի յերկրի ստալինյան ղեկավարման նոր հիմնալի տրիումֆը հանդիսացան, խորհրդային ժողովրդի բարոյական-քաղաքական միասնության նոր հղոր արտահայտությունը, կոմունիստների և անկուսակցականների բրոկի նոր հաղթանակը հանդիսացան:

Հնտրություններն անցան մեր յերկրի ժողովուրդների յեղբայրական բարեկամության հետագա ամրացման նշանաբանով, վորովհետև

«... Բարեկամությունը ԽՍՀՄ ժողովուրդների միջև մեծ և լուրջ նվաճում ե: Վորովհետև քանի այդ բարեկամությունը գոյություն ունի, մեր յերկրի ժողովուրդներն ազատ և անպարտելի կլինեն: Վոչ վոք սարսափելի չե մեզ, վոչ ներքին, վոչ արտաքին թշնամիները, քանի այդ բարեկամությունն ապրում է և կենդանի յե»: (ՍՏԱԼԻՆ):\*



\*.) Ի. Ստալին: Կուսակցության և կառավարության հետ Ցավիկատանի ու Բուրբմենստանի առաջավոր կոլանաեստականների ու կոլանաեստէիների խորհրդակցությունում արտասահմած ճառը: Ժող. Լենին և Ստալին, հատ. III, էջ 660.



АЗЭРБАЙЧАН К(б)П МК ЯНЫНДА Ст. ШАУМЯН АДЫНА  
ПАРТИЯ ТАРИХИ ИНСТИТУТУ

---

Евг. ТОКАРЖЕВСКИ, МАМЕД КАЗИЕВ

## ССРИ ХАЛГЛАРЫНЫН СТАЛИН ДОСТЛУГУ

АЗЭРНЭШР  
Сияси эдэбийят шө'бэси  
Бакы — 1940